Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
նոյեմբերի 10-ի N 1727 - Ն որոշման

ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Ընդհանուր դրույթներ

1. Փոխհամաձայնեցման ընթացակարգը (այսուհետ՝ ընթացակարգ) կարգավորում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի (այսուհետ՝ համաձայնագիր) դրույթներին չհամապատասխանող հարկման դեպքերում հարկային հարցերով վեճերի լուծման կարգը և ժամկետները:

2. Ընթացակարգով սահմանված դրույթները կիրառելի են այնքանով, որքանով չեն հակասում համաձայնագրերի դրույթներին:

3. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձը կամ ռեզիդենտ կազմակերպությունը (այսուհետ՝ դիմող) կարող է, համաձայնագրով նախատեսված կարգով, ընթացակարգ սկսելու դիմում (այսուհետ՝ դիմում) ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնին (այսուհետ՝ հարկային մարմին), որի արդյունքում, օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, կարող է սկսվել ընթացակարգ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հարկային մարմնի միջև, եթե երկու երկրների միջև առկա է համաձայնագիր:

4. Դիմողը դիմումը ներկայացնում է հարկային մարմնին՝ համապատասխան համաձայնագրով սահմանված ժամկետներում: Համաձայնագրով սահմանված ժամկետի ավարտից հետո դիմում ներկայացնելը հիմք է հանդիսանում հարկային մարմնի կողմից դիմումը մերժելու համար:

5. Հարկային մարմնի կողմից ընթացակարգ սկսելու համար որևէ վճար չի գանձվում:

2. Ընթացակարգի դիմելու գործընթաց

6. Դիմողը դիմումով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները և փաստաթղթերը.

1) դիմողի և դիմումով ներկայացված գործարքների կողմեր հանդիսացողների վավերապայմանները. ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, հաշվառման հասցեն, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից), էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը).

2) համաձայնագրի կողմ հանդիսացող մյուս երկրի իրավասու մարմնի անվանումը և առկայության դեպքում՝ տարածքային հարկային մարմնի անվանումը, որի կողմից իրականացված գործողությունները հանգեցրել կամ կարող են հանգեցնել հարկման, որը չի համապատասխանում համաձայնագրի դրույթներին.

3) համաձայնագրի այն հոդվածը, որի դրույթները դիմողի կարծիքով կիրառվել են ոչ պատշաճ կամ խախտվել կամ չեն կիրառվել, այդ դրույթների կիրառման վերաբերյալ դիմողի մեկնաբանությունները.

4) դիմումով ներկայացված գործարքներին առնչվող ժամանակահատվածը.

5) դիմումով ներկայացված գործարքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն և համառոտ նկարագրություն համապատասխան փաստերի վերլուծության և հիմնավորող հաշվարկների վերաբերյալ.

6) տրանսֆերային գնագոյացման փաստաթղթերն ըստ անհրաժեշտության, որոնք վերաբերում են դիմումով ներկայացված գործարքներին.

7) առկայության դեպքում դիմողը ներկայացնում է նաև՝

ա) համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնին ներկայացված կամ ներկայացման ենթակա դիմումի պատճենը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը՝ ներառյալ նամակները, առարկությունները, հղումները և այլ փաստաթղթեր, որոնք ստացվել են այդ երկրի իրավասու մարմնի կողմից,

բ) առարկություն, բողոք կամ փոխհատուցման չափի որոշման վերաբերյալ տեղեկանք կամ ցանկացած այլ հիմնավորող փաստաթուղթ, որը ներկայացվել է

դիմողի կողմից համաձայնագրի կողմ հանդիսացող երկու երկրների իրավասու մարմիններից որևէ մեկին,

գ) նախկինում նմանատիպ դեպքի վերաբերյալ դատարանի վճիռ կամ համաձայնագրի կողմ հանդիսացող երկու երկրներից որևէ մեկում նմանատիպ վարույթների վերաբերյալ տեղեկատվություն,

դ) ցանկացած այլ երկրների միջև փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով նմանատիպ գործի լուծման փաստաթղթի պատճենը, որը կարող է ազդեցություն ունենալ ընթացակարգի վրա,

ե) ցանկացած այլ տեղեկատվություն, որը դիմողը կհամարի տեղին:

7. Դիմումը ստորագրվում է դիմողի կամ նրա ներկայացուցչի կողմից:

8. Դիմողը հավելվածի 6-րդ կետով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը հարկային մարմին է ներկայացնում փաստաթղթերի էլեկտրոնային համակարգի միջոցով՝ հայերեն կամ անգլերեն կամ ռուսերեն՝ պայմանով, որ անգլերեն կամ ռուսերեն տեղեկությունները և փաստաթղթերը հարկային մարմնի պահանջով թարգմանվեն հայերեն և ներկայացվեն հարկային մարմին՝ այդ մասին գրավոր ծանուցումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Դիմումն ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով ծանուցում է դիմողին՝ դիմումին ընթացք տալու կամ մերժելու կամ դիմումով ներկայացված գործարքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու վերաբերյալ: Դիմողը լրացուցիչ տեղեկատվություն ստանալու պահանջի օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է պահանջվող լրացուցիչ տեղեկատվությունը: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը քննարկում է ստացված տեղեկատվությունը և էլեկտրոնային եղանակով ծանուցում է դիմողին՝ դիմումին ընթացք տալու կամ մերժելու վերաբերյալ:

3. Իրավասու մարմինների միջև քննարկումներ

10. Դիմումը ստանալուց հետո հարկային մարմինն ուսումնասիրում է գործարքների փաստական հանգամանքները և, անհրաժեշտության դեպքում, դիմում է այլ երկրի իրավասու մարմնին՝ ընթացակարգի մեկնարկելու նպատակահարմարության հայցով՝

պարզելու դիմումով ներկայացված գործարքների վերաբերյալ համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի դիրքորոշումը:

11. Հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով ծանուցում է դիմողին համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից ընթացակարգ մեկնարկելու հայցն ընդունելու կամ մերժելու մասին որոշումն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

12. Այն դեպքում, երբ ընթացակարգ մեկնարկելու հայցը համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից ընդունվել է, ապա հարկային մարմինը մյուս երկրի իրավասու մարմնի հետ սկսում է քննարկումներ այդ որոշումը ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում:

13. Այն դեպքում, երբ ընթացակարգ մեկնարկելու հայցը համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի կողմից ընդունվել է, ապա այդ որոշումը ստանալուց հետո հարկային մարմինը 6 ամսվա ընթացքում համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմին է ներկայացնում իր դիրքորոշումը, որը կարող է ներառել հետևյալ տեղեկությունները.

1) հավելվածի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկությունները, մյուս երկրում դիմումով ներկայացված գործարքների փոխկապակցված կողմերը և փոխկապակցված համարվելու որոշման հիմքերը.

2) հարկային մարմնի կոնտակտային տվյալները.

3) խնդրի ամփոփ նկարագիրը, դիմումով ներկայացված գործարքները, հարկային պարտավորությունների հաշվարկման հիմքերը.

4) դիմումով ներկայացված գործարքներին առնչվող ժամանակահատվածը.

5) դիմումով ներկայացված եկամտի գումարը և յուրաքանչյուր հարկային տարվա կտրվածքով հարկի հաշվարկումը.

6) դիմողի հարկային հաշվարկներից (հաշվետվություններից) համապատասխան ամփոփ տեղեկատվություն.

7) հարկի հաշվարկման նկարագիրը, ներքին օրենսդրության և համաձայնագրի համապատասխան հոդվածները.

8) լրացուցիչ տեղեկությունների հիման վրա կատարված հաշվարկներ (կարող է ներառել ֆինանսական և տնտեսական տեղեկությունները, հաշվետվությունները, բացատրական ուղեցույցներ, ինչպես նաև դիմողի փաստաթղթեր և փաստեր).

9) հարկի հաշվարկի համար կիրառված մեթոդաբանության և համադրելի գործարքների նկարագրերը.

10) հարկի հաշվարկման համար կիրառված տրանսֆերային գնագոյացման մեթոդի ընտրության բացատրությունը:

14. Հարկային մարմինը կարող է ընթացակարգ իրականացնել համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի հետ անմիջական քննարկումների միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները:

15. Այն դեպքում, երբ հարկային մարմինը համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնից ստացել է ընթացակարգ մեկնարկելու նպատակահարմարության հայց, 30 աշխատանքային օրվա ընթացքում կարող է ընթացակարգը մեկնարկելու հայցն ընդունել կամ մերժել: Մասնավորապես՝ ընթացակարգը մեկնարկելու հայցը կարող է մերժվել, եթե հայցում նկարագրված խնդրի լուծման համար առկա է դատական նախադեպ, համաձայնագրով նախատեսված ժամկետն ավարտվել է կամ հայցով ներկայացված խնդիրը չի առնչվում համաձայնագրի դրույթների կիրառման հետ: Անհրաժեշտության դեպքում, պարզաբանում կամ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, հարկային մարմինը կարող է դիմել համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնին: Ընթացակարգը մեկնարկելու նպատակահարմարության հայցի վերաբերյալ պարզաբանում կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը քննարկում է ստացված տեղեկատվությունը և ընթացակարգը մեկնարկելու հայցն ընդունում կամ մերժում է: Ընթացակարգ մեկնարկելու նպատակահարմարության հայցի պատասխանը կարող է ներառել հետևյալ տեղեկությունները.

1) նշում, որ նախնական դիրքորոշման տեսակետը կամ առաջարկվող լուծումն ընդունելի է.

2) խնդիրների կամ հատվածների նշում, որտեղ համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների իրավասու մարմիններն ունեն համաձայնություն կամ տարաձայնություն.

3) լրացուցիչ տեղեկությունների կամ որոշ խնդիրների պարզաբանման համար անհրաժեշտ բացատրությունների հայցում.

4) այլ կամ լրացուցիչ տեղեկությունների ներկայացում, որոնք առնչվում են դիմումով ներկայացված գործարքներին, սակայն բարձրացված չեն դիրքորոշման մեջ.

5) խնդիրը լուծելու առաջարկներ կամ տեսակետներ:

16. Ընթացակարգի շրջանակներում իրավասու մարմինների միջև տեղեկությունների փոխանակումն ամբողջությամբ պաշտպանված է համաձայնագրի գաղտնիությունն ապահովող դրույթներով:

4. Քննարկումների արդյունքները

17. Իրավասու մարմինների միջև քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնության հիման վրա կազմվում է համառոտ տեղեկանք, որում արտացոլվում են համաձայնագրի կողմ հանդիսացող երկու երկրների կողմից տրամադրվելիք արտոնության չափերը, ինչպես նաև այդպիսի արտոնության տրամադրման եղանակը: Համառոտ տեղեկանքը ներկայացվում է մյուս երկրի իրավասու մարմնի հաստատմանը:

18. Մյուս երկրի իրավասու մարմնի կողմից համառոտ տեղեկանքը հաստատվելուց հետո հարկային մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է դիմողին՝ ձեռքբերված համաձայնությունների մասին:

19. Դիմողը ձեռք բերված համաձայնությունների մասին համառոտ տեղեկանքի վերաբերյալ դիրքորոշումը էլեկտրոնային եղանակով ներկայացնում է հարկային մարմին՝ համառոտ տեղեկանքն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում:

20. Դիմողի համաձայնությունն ստանալու դեպքում՝ հարկային մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում մյուս երկրի իրավասու մարմնի հետ փոխանակում է փոխադարձ համաձայնության վերաբերյալ գրավոր հաստատում: Իրավասու մարմինների միջև փոխադարձ համաձայնության վերաբերյալ գրավոր հաստատումների փոխանակումից հետո ընթացակարգը համարվում է ավարտված:

21. Դիմողը կարող է մասնակի ընդունել համառոտ տեղեկանքով ներկայացված համաձայնությունները: Այս դեպքում, ստանալով դիմողի մասնակի համաձայնությունը, հարկային մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում մյուս երկրի իրավասու մարմնի հետ փոխանակում է փոխադարձ համաձայնության վերաբերյալ գրավոր հաստատում: Իրավասու մարմինների միջև փոխադարձ համաձայնության վերաբերյալ գրավոր հաստատումների փոխանակումից հետո ընթացակարգը համարվում է ավարտված:

22. Այն դեպքում, երբ դիմողին չի բավարարում իրավասու մարմինների միջև ձեռք բերված համաձայնությունը, դիմողը կարող է մերժել այն կամ ներկայացնել հիմնավոր այլընտրանքային դիրքորոշում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ այդ մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնելով հարկային մարմնին: Այլընտրանքային դիրքորոշումն ստանալոց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով ծանուցում է դիմողին՝ այլընտրանքային դիրքորոշմանը ընթացք տալու կամ մերժելու վերաբերյալ: Այլընտրանքային դիրքորոշմանն ընթացք տալու դեպքում իրավասու մարմինը ընթացակարգը կհամարի վերսկսված: Այն դեպքում, երբ դիմողին չի բավարարի իրավասու մարմինների միջև ձեռք բերված համաձայնությունը, իրավասու մարմինները գործը կհամարեն ավարտված, և 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով կտեղեկացնեն դիմողին: Դիմումի վերաբերյալ համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների իրավասու մարմինների միջև ձեռքբերված համաձայնությունը մերժելու դեպքում՝ դիմողը կարող է գործը բողոքարկել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով սահմանված կարգի:

23. Հարկային մարմինն իրականացնում է համապատասխան վարչարարություն համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների իրավասու մարմինների միջև ձեռք բերված համաձայնությունն իրականացնելու ուղղությամբ:

5. Ընթացակարգի արդյունքի իրավական ազդեցությունը

24. Ցանկացած համաձայնություն, որը ձեռք է բերվել ընթացակարգի ներքո, կատարվում է անկախ ՀՀ հարկային օրենսդրության մեջ առկա ժամանակային սահմանափակումներից:

25. Ընթացակարգի արդյունքում ձեռք բերված համաձայնությունը կիրառվում է միայն այդ առանձնահատուկ դեպքի և միայն այն ժամանակահատվածի նկատմամբ, որի համար իրականացվել է ընթացակարգը:

26. Այն դեպքում, երբ հարկային մարմինը դիմողի դիմումի համաձայն ի վիճակի չէ համաձայնագրով նախատեսված ժամկետներում լուծելու հարկային հարցերով վեճը համաձայնագրի մյուս կողմ հանդիսացող երկրի իրավասու մարմնի հետ ընթացակարգի միջոցով, ապա լուծում չստացած յուրաքանչյուր հարկային հարցերով վեճին վերաբերող գործ դիմողը կարող է ներկայացնել արբիտրաժային դատարան (միջնորդ դատարան),

եթե դա նախատեսված է համաձայնագրով: Մնացած չկարգավորված հարցերը ենթակա են կարգավորման համաձայնագրով սահմանված կարգով:

27. Հարկ վճարողը կարող է նախընտրել համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկման արդյունքում առաջացած անճշտությունները լուծել ինքնուրույն, ոչ թե ընթացակարգի միջոցով, կամ այլընտրանքային տարբերակով. հարկային մարմնին խնդրել ճշգրտել անճշտություններից մեկը, իսկ մյուսները՝ ինքնուրույն:

28. Եթե հարկային մարմինը կաշկանդված է դատարանի որոշմամբ, որը խոչընդոտում է ընթացակարգի շրջանակներում տրամադրել ավելի բարենպաստ հարկային հարցերով վեճի լուծում, քան նախատեսված է դատարանի որոշմամբ, հարկային մարմինը դիմողին է ներկայացնում այդ դիրքորոշումը՝ բացատրելով այդ որոշման իրավական հիմքերը:

29. Համաձայնագրի կողմ հանդիսացող երկրների իրավասու մարմինների կողմից ընթացակարգի դեպքում պարտավորությունների հաշվարկման տարբեր մոտեցումների առկայության դեպքում՝ իրավասու մարմինները մինչ ընթացակարգի ավարտը կիրականացնեն քննարկումներ՝ նման տարբերություններով պայմանավորված պարտավորությունների վճարումը բացառելու համար:

30. Դիմողը կարող է դիմել դիմումով նախատեսված գործարքների գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկման հետաձգման կամ կասեցման համար: Այս դեպքում հարկային մարմինը 30 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում դիմումի ներկայացման օրվանից մինչև ընթացակարգի ավարտը լրացուցիչ հարկային պարտավորությունների հաշվարկը հետաձգելու կամ կասեցնելու մասին դիմումն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ և դիմողին էլեկտրոնային եղանակով ծանուցում ընդունված որոշման մասին:

6. Տիպային ժամանակացույց

31. Ստորև ներկայացված աղյուսակը նկարագրում է ընթացակարգի իրակա-նացման տիպային ժամանակացույցը:

Աղյուսակ 1. Ընդհանուր ցուցումներ ընթացակարգի գործընթացի ժամանակացույցի վերաբերյալ

#	Գործողություն	Ժամկետ
1.	Դիմողի կողմից ընթացակարգի մեկնարկ-դիմումի ներկայացում	Համաձայնագրով սահմանված ժամկետում
2.	Հարկային մարմնի կողմից դիմումի ուսումնասիրություն՝ • դիմումի ընթացք տալ կամ մերժում, • դիմողից լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով այլ փաստաթղթերի պահանջում	Դիմումի ներկայացման օրվանից հետո 30 աշխատանքային օրվա ժամկետում
3.	Հարկային մարմնի կողմից դիմումի ուսումնասիրություն՝ • դիմողի կողմից լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով այլ փաստաթղթեր ստանալու դեպքում	Դիմողի կողմից լրացուցիչ տեղեկություններ ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ժամկետում
4.	Մյուս երկրի իրավասու մարմնի կողմից ընթացակարգ սկսելու հարցման համապատասխանության որոշում	Հնարավոր չէ սահմանել
5.	• Հարցումն ընդունելու դեպքում – ընթացակարգի շուրջ քննարկումների մեկնարկ մյուս երկրի իրավասու մարմնի հետ և ծանուցում դիմողին • Հարցումը մերժվում է – ծանուցում դիմողին	Մյուս երկրի իրավասու մարմնի կողմից որոշումն ընդունելուց հետո 10 աշխատանքային օրվա ժամկետում
6.	Մյուս երկրի իրավասու մարմնի կողմից ներկայացված գործի ուսումնասիրություն, դիրքորոշման ամբողջականության վերաբերյալ նախնական գնահատական և անբավարար տեղեկությունների վերաբերյալ ծանուցում	Դիրքորոշումը ստանալուց հետո 6-ամսյա ժամկետում
7.	Իրավասու մարմինների միջև բանակցությունների անցկացում	6 ամիս
8.	Իրավասու մարմինների միջև փոխհամաձայնեցում, որը փոխըմբռնման հուշագրի տեսքով փաստաթուղթ է երկու իրավասու մարմինների միջև	Դիմումի ընդունումից հետո 24-ամսյա ժամկետում
9.	Դիմողի կողմից փոխհամաձայնության հաստատում	10 աշխատանքային օրվա ընթացքում
10.	Փոխհամաձայնեցման ընդհանուր դրույթների և պայմանների հաստատում, վերջնական նամակների փոխանակում	Դիմողի կողմից փոխհամաձայնեցման հաստատումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում

11.	Փոխհամաձայնեցման ընթացակարգի իրականացում	Վերջնական նամակների փոխանակումից հետո 3-ամսյա ժամկետում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

10.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ